

613.7
L-30

Ա. Ա. ԼԵՐԵԳԻՆԱԿ

ՔԵԶԿՈՒԼՏՈՒՐՈՒ
ԸՄՐԵՑՆՈՒՄ Ե
ԱԹՈՂ ԶՈՒԹՅՈՒՆՆԵ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱԴՐ ՔԵԶԲՅՈՒՐՈՅԻ
ԵՎՐՈՊԱՆ

1930 թ.

30 APR 2013

20 JUL 2010

613.7
L-30

ԱՐ

Ս. Ս. ԼԵՒԴԻՆԱԿԻ

ԳԻՉՎՈՒԼՏՈՒՐԱՆ

ԱՄՐԾՅՈՒԹ Ե
Ա Թ Ո Ղ Զ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

14116-52



1980 թ.

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ Ե ԲԵՐՈՒՄ
ՔԱՂԱՔԻՆ ՑԵՎ ԳՅՈՒՂԻՆ

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ Ե

Ամեն մի գյուղացի շատ լավ գիտի, թե ինչ չէր պետք և ինսամել անհասունների առողջությունը, և այդ ինսամքն իր ամենակարենոր գործերից մեկն է համարում :

Իսկ իրենց սեփական առողջության, իրենց զավակների առողջության մասին գյուղացին ու գեղջկուհին սովոր չեն միշտ մտածել, միշտ հոգալ : Իրենց առողջության մասին նրանք հիշում են այն ժամանակ միայն, յերբ հիվանդանում են :

Յարի և կալվածատերերի իշխանության ժամանակ ուրիշ կերպ չեր ել կարող լինել : Խավարն ու տղիտությունը, վորի մեջ գիտումնավոր կերպով պահում ելին գյուղացիությանը ցարն ու կարվածատերերը, խանդարում ելին գլուխ հանել, թե ի՞նչն ե վնաս և ի՞նչն ե ոգուտ : Դաժան կարիքը սեփական առողջության հոգնը վերջին տեղն եր մղում : Իսկ գյուղացիության խավարին նպաստող կրոնը սովորեցնում եր, թե մարմնի առողջությունը դատարկ բան է, միայն ին առողջ ու մաքուր լինի հոգին :

ՀԱՅՊՈԼԻԿԻՑԻ ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 2687
ԳՐԱՌԵՊԳԼԻՆՎԱՐ 5191 (բ)
ՏԻՐԱԺ 3000

Այդպես չե խորհրդային իշխանության ու-
րով : Խորհրդային իշխանությունը, բանվորի ու-
ղյուղացու իշխանությունը—բանվորի ու գյու-
ղացու առողջությունն իր կարեռագույն խըն-
դիմութիւն մեկն է համարում :

Խորհրդային Միության վողջ բարեկեցու-
թյունն աշխատավորության առողջությունից և
ուժերից ե կախված : Միայն առողջ մարդն ե,
վոր կարող ել լավ աշխատել, ոգտվել իր աշխա-
տանքի արդյունքներից և պաշտպանվել թշնամի-
ների հարձակումից :

Խորհրդային իշխանությունն այդ լավ և
հաշվի սոնում և ամեն ջանք զործ ե դնում ամ-
րացնելու բանվորի ու գյուղացու առողջու-
թյունը, ավելացնելու նրանց ուժերը :

Դրա ամենազլամավոր միջոցներից մեկն և
հանդիսանում Փիզկուլտուրան :

Վերջին տարիներս վոչ միայն Միության
բաղաքներում, այլև բազմաթիվ գյուղերում
արդեն վորոշ բան լսել են Փիզկուլտուրայի մա-
սեն, վորոշ բան իմանում են նրանից : Բայց շատ
տեղ ճիշտ չգիտեն, թե ի՞նչ բան է Փիզկուլտու-
րան :

Շատերը կարծում են, վոր Փիզկուլտուրա-
յով զբաղվելն ասել ե՝ միմիայն դանազան խա-
ղեր խաղալ, որինակ՝ ֆուտբոլ և այլ տեսակի

մարզանքները : Այդ ճիշտ չե : Խորհրդային Փիզ-
կուլտուրայի, բանվորի ու գյուղացու Փիզկուլ-
տուրայի խնդիրն ե—աշխատավորության ներ-
զրավել առողջության ամրացման, ուժերի ավե-
լացման և աշխատունակության բարձրացման
համար մզվող պայքարում :

Այդ պատճառով ել խորհրդային Փիզկուլ-
տուրան կոչ և անում աշխատավորությանը միշտ
հոգ տանել սեփական առողջության մասին և
այն ամրացնել բոլոր հնարավոր յեղանակներով :

Այս գործում ողտակար են և խաղերը, և
զանազան տեսակի մարզանքները. բայց այդ
միայն բավական չե :

Մեր Փիզկուլտուրան սովորեցնում և աշխա-
տավորությանը խնամել սեփական առողջու-
թյունը թե՛ ուտելիս, թե՛ լվացվելիս, թե՛ աչ-
խատելիս և թե հանդստանալիս :

Յերբ հիվանդանում ես, լավանալը միշտ
ճեշտ չի լինում, նույնիսկ յերբեմն անկարելի յե-
ղանում : Շատ ավելի ճեշտ գործ և հիվանդու-
թյունը կանխել : Նա, ով չի ուզում հիվանդա-
նալ, հավատարիմ ողնական կարող և ունենալ
հանձին Փիզկուլտուրայի, — Փիզկուլտուրան ող-
նում և պաշտպանվել գանազան հիվանդություն-
ներից, յերբեմն նույնիսկ բուժվել արդեն սկսո-
ված հիվանդությունից, որինակ՝ արյան պակա-

սությունից և մի քանի չղալին հիվանդություն-ներից :

Այն մեծ ոգուաը, վոր տալիս և առողջությանը Փիզկուլտուրան, յերեսն և դալիս մի քա-նի ամսից :

Այսպէս, որինակ՝ մի քանի ժամանակ առաջ հետազոտության յենթարկվեց իվանովով վոզնեսենսկի բանվորա-դյուլայիական յերիտասարդությունը։ Այդ հետազոտությունը ցույց տվեց, վոր Փիզկուլտուրայով զբաղվող յերիտասարդներից 100-ից 33-ն սկսվող թոքախափ նը-շաններ են ունեցել։ Իսկ Փիզկուլտուրնիկներից շանքառ միայն 22-ն եյին այդպիսին։ Դրանք 100 հոգուց միայն 22-ն եյին այդպիսին։ Ելքուն այնպիսիներն եյին, վորոնք նոր եյին սկսել ել այնպիսիներն եյին, վորոնք նոր եյին սկսել այնպիսիներն եյին, վորոնք նոր ել վոչ ճիշտ Փիզկուլտուրայով պարապել, այն ել վոչ ճիշտ ժեթողով։ Այնուամենայնիվ Փիզկուլտուրայով պարապելը խոչոր չափով նվազեցրել եր թոքախափուրների թիվը։

Ֆիզկուլտուրան աշխատավորին դարձնում և վոչ միայն ավելի առողջ, այլև ավելի ուժեղ ու ավելի ճարպիկ։ Մեր խորհրդային Փիզկուլտուրավելի ճարպիկ։ Մեր խորհրդային Փիզկուլտուրնիկներն ավելի քան մեկ անգամ հաղթել են ունիկներն ավելի քան մեկ անգամ հաղթել են ունիկներն ավելի քան մերժությունների ժամանակ։ ասրերի կրացիներին մըցությունների ժամանակ։ Բայց դե, իհարկե, այդ չե կարեորը։ Կարեորն այն ե, վոր ավելի ուժեղ և ճարպիկ բանվորն ու այն ե, վոր ավելի ուժեղ և ճարպիկ բանվորն ու

գյուղացին ավելի լավ ել կաշխատեն և ավելի շուտ կբարելավեն իրենց տնտեսությունը։

Հիվանդություններից պաշտպանելու, առողջությունն ամրացնելու ուժն ու ճարպիությունն ավելացնելու հետ միասին, Փիզկուլտուրան ոգնում և բանվորին ու գյուղացուն ազատվել ծանր աշխատանքի չնորհիվ ձեռք բերած պակասություններից, ինչպիսին են, որինակ՝ կուացածությունը, ծուռ կողքեր ունենալը և այլն։ Ֆիզկուլտուրան սովորեցնում և մարդկանց հարաբեկել առողջության համար վնասակար մոլություններից, ինչպիսին են, որինակ՝ ծխելը և խմելը։ Ֆիզկուլտուրան սովորեցնում և ճիշտ կերպով ոգտագործել հանգիստն ոգտակար ժամանակներով և դրանով հատկապես յերիտասարդությանը կարել հարթեցնողությունից ու խուլիգանությունից։

Խորհրդային յերկերը միակ յերկերն ե ամսող աշխարհում, վորտեղ իշխանությունն իր ամբողջ ուժով աջակցում և բանվորի ու գյուղացու Փիզկուլտուրային։

Ֆիզկուլտուրայի Գերազույն Խորհուրդը Մոսկվայում, ինչպես նաև նահանգական ու գավառական խորհուրդներն ոգտվելով պետական այդ աջակցությունից՝ մեղ մոտ մեծ աշխատանք են կատարում։

Ցիզկուլտխորհուրդները բանվոր յերիտաս-
ռարդներից շատերին են ներգրավել Փիզկուլտու-
րույի շարքերը։ Իսկ գյուղում առայժմ նրանց
քիչ բան ե հաջողվել անել։

Անհրաժեշտ է, վոր գյուղացիները, առաջն
Հերթին գյուղական յերիտասարդությունը; ծա-
ռաթանան, թե ի՞նչ բան ե Փիզկուլտուրան և
լոմբոնին այն մեծ ոգուար, վոր կարող ե տալ
դյուղացուն Փիզկուլտուրան։

Անհրաժեշտ է, վոր Փիզկուլտուրան գյուղը
թափանցի, գյուղացու համար առողջություն
ուսներով իր հետ։ Դրան նպաստել կարող ե գյու-
ղուկան ակտիվ ու դիտակից յերիտասարդու-
թյունը, հենվելով խորհրդային իշխանության
ուղական մարմինների աջակցության վրա։

«ՄԱՐԴԻ ԶԻ ԿԱՐՈՂ ԱՊՐԵԼ ՈՒ ՍԱՌՈՂ ԼԻՆԵԼ
ԱՌԱՆՅ ՄԱՔՈՒՄ ՈԴԻՒ ԱՌՈՂՋ ԼԻՆԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ԲԱՎԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ
ԼԻՆԵԼ ՄԱՔՈՒՄ ՈԴՈՒՄ, ՀԱՃԱԿԱԿԻ ՓՈԽԵԼ
ՍԵՆՅԱԿԻ ՈԴՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ, ՃԻՇՏ ՇՆՉԵԼ
ՍՈՎՈՐԵԼ»

ՍՈՎՈՐԵՑԵՔ ՈԳՏՎԵԼ ՄԱՔՈՒՄ ՈԴԻՑ

Կենդանի մարդու համար ողը անհրաժեշտ
է։ Մարդը հենց վոր ծնվում է, ող ե ներշնչում
էր թռքերի մեջ և այնուհետև սկսում ե չնչել
ամբողջ կյանքի ընթացքում։ Նա դադարում ե
չնչել այն ժամանակի միայն, յերբ մեռնում է։

Մարդը չի կարող ամեն տեսակ ող չնչել։
Լինում են դեպքեր, յերբ փակված ողից մարդիկ
խեղջվում են, մեռնում։ Այդ հատկապես պա-
տահում ե հանգերում։

Յեթե ողն ապականվում ե և այնքան ել ո-
չեղ չի, ինչպես դա հաճախ ե պատահում համ-
քերում, այն ժամանակ մարդիկ կարող են ծանը
հիվանդանալ։ Հաճախ ե պատահում, յերբ յեկե-
ղեցում կամ վորեւ ժողովատեղում, վորտեղ

շատ մարդ ե կուտակված և մաքուր ողի համար անցք չկա, ներկա յեղողները ուշաթափվում են, կամ գլխապուռյա են զղում:

Այս բանվորները, վորոնք աշխատում են այնպիսի գործարաններում ու ֆաբրիկաներում, վորտեղ արտադրության բնույթի չնորհիվ վակած կամ փոշոտ ող ե լինում, շատ հաճախ թուփած կամ փոշոտ ող ե լինում, շատ հաճախ թուփախտ են ստանում, արյան պակասությունն և ուրիշ հիվանդություններ են ձեռք բերում:

Գյուղի ողը քաղաքի ողի հետ չի համեմատվում: Ողն անտառում, դաշտում, մաքուր ու չապականված գյուղական դարպասում հենց այնպիսին ե, վորն անհրաժեշտ ե:

Անմաքուր ողն առանձնապես վնասակար ե յերեխանների համար: Այդպիսի ողից նրանք նիշարում են, թուլանում և դանդաղությամբ առնում:

Այնուամենայնիվ գյուղացիները, յեթե ողափում են մաքուր ողից, ապա միայն դարձնանք և ամուսնը:

Իսկ ձմեռը նրանք, մանավանդ գեղջկուհիները քիչ ժամանակ են խրճիթից դուրս անցները քիչ ժամանակ են խրճիթից դուրս անցները քիչ ժամանակ են խրճիթումն ել ողը հաճախ այնպիսինն ե, վոր յերբ զրսից ես մտնում, գլուխութպատճառ ե գալիս: Զափազանց շատ վառած ե լիպում, ողի համար անցք գոյություն չունի, բայց

մաթիվ մարդիկ կան: Հաճախ նույն սենյակումն են գանվում նաև հավերը, հորթերը, գառները, խոճկորները և ուրիշ չնչավորներ, վորոնք ապականում ու փշացնում են ողը: Մեզ մոտ, գյուղերում շատ յերեխաններ են մեռնում, գյուղացիներն ամենուրեք շատ վաղ հասակում են մեռնում, գյուղական հիվանդանոցները միշտ լիքն են լինում կրծքի զանազան հիվանդություններով տառապող մարդկանցով, —և այդ ամենում խոշոր ազդեցություն ունի գյուղական խրճիթների փակված ողը:

Այս գյուղացին, վորը ցանկանում է առողջ լինել, ունենալ առողջ զավակներ ու առողջ ընապահիք, պետք ե կրվի փակված ու անմաքուր ողի դիմ:

Անհրաժեշտ ե որը 2-3 անգամ փոխել սենյակի ողը, առանց վախենալու ցրտից, նույնիսկ ամենախիստ սատնամանիքների ժամանակ: Յեթե լուսամուտը հատուկ ողանցք ունի՝ լավ—այն կարելի յե բաց անել կես ժամ, մեկ ժամ և ավելի: Իսկ յեթե ողանցք չկա, այդպիսին պետք ե պատրաստել, իսկ մինչեւ պատրաստելը՝ հաճախակի բաց անել դուռն ու լուսամուտը: Նույնիսկ չպետք ե վախենալ նաև այն ժամանակ, յերբ սենյակում հիվանդ կամ յերեխա կա

որառկած : Միայն թե նրանց լավ պետք եւ փառքաթել :

Սենյակում վոշի չբարձրացնելու համար սնապայման թաց ավելով պետք եւ մաքրել : Թաց լաթով եւ հաճախ պետք եւ սրբել սենյակի իրերի վրա և բոլոր անկյուններում կուտակվող փոշին :

Նույնիսկ ամենալավ ողափոխված սենյակում եւ ողը չի կարող լինել այնպես մաքուր, ինչպես անտառում, դաշտում և նույնիսկ փողոցում :

Անհրաժեշտ ե, վոր թե փոքրերը և թե մեծերն որը 2-3 ժամ բաց ողում անցկացնեն : Ծըծեր յերեխաներին դուրս բերել չի կարելի մի-միայն շատ խիստ սառնամանիքների ժամանակ :

Մաքուր ող չնչելը բավական չի : Պետք եւ նաև նիշտ չնչել գիտենալ : Քթով պետք եւ չնչել, և վոչ թե բերնով : Միայն քթի այս կամ այն հիվանդություն ունեցողն ե, վոր չի կարողանում քթով չնչել, իսկ այդպիսի հիվանդությունն անպայման պետք եւ բժշկել : Միշտ պետք եւ աշխատել խորը չնչել, ավելի մեծ քանակությամբ ող ներչնչել և արտաշնչել : Յերբ ծռված ես աշխատում, խորը չնչել չի կարելի : Հետեւարար այդ դիրքով աշխատողները պետք եւ հաճախակի, գոնե մի պահ, ուղղվեն և խորը չնչեն .

մեկմեկ հարկավոր եւ շատ խորը չնչել բաց ուղում կամ բացված լուսամուտի առաջ կանգնած :

Առողջության համար շատ կարեսը ե, յեթե յարդը քնի ժամանակ մաքուր ող չնչի : Վորովեազի քունն առողջ լինի, վորպեսզի քնից հետո մարդ առույդ վեր կենա, պետք եւ քնել կամ բաց ողում, կամ լավ ողափոխված սենյակում : Յերբ սենյակումն ես քնում, լավ կլինի ամբողջ գիշերն ողանցքը բաց պահել : Յեթե այդպես սկսես ամուսնը, ապա կվարժվես և չես վախենա ձմռան եւ ողանցքը բաց քնել : Բոլոր սահատորիաներում հիվանդներն ամառ թե ձմեռ քնում են ողանցքները բաց : Վնասակար են նույնպես քնելիս շատ ծածկել կամ սպիտակեղենի վրայից ուրիշ չոր հաղած պառկել :

«ՀԱՐԿԱՎՈՐ Ե ՈԳՏՎԵԼ ՄՐԵՎԻ ԲՈՒԺԻՉ ՑԵՎ
ԶՈՐՍՅՆՈՂ ՈՒԺԻՑ : ՀԱՐԿԱՎՈՐ Ե ՄՐԵՎԻ
ՃԱՌԱԴԱՅԹՆԵՐԻ ԱՌԱՋ ՃԱՆԱՊԱՐՀ ԲԱՅ ԱՆԵԼ
ԴԵՊԻ ՍԵՆՅԱԿՆԵՐԼ»

ԱՐԵՎՆ ԱՌՈՂԶՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԲԱՐԵԿԱՄՆ Ե

«Այստեղ, վորտեղ մտնում ե արել, քժիշկը
մուտք չունի», — այսպէս ե ասում հին առածը:
Արել, իսկապէս, մարդկային առողջության լա-
վագույն բարեկամն ե :

Գյուղացին շատ լավ գիտի, թե ինչ նշանա-
կություն ունի բույսերի համար արել: Յեթև
ամռան արել քիչ ե, բերքը լավ չի լինի: Հացը,
բանջարեղենը և պտուղը չեն լեցվում և չեն ա-
ճում այնպէս, ինչպէս հարկավոր ե :

Մարդը նույնապէս չի կարողանում լավ ա-
ճել, ամրանալ ու առողջ լինել առանց արելի:
Արել վոչ միայն ամբացնում ե մարդկանց ա-
ռողջությունը, այլև սուանում ե վարակը և ող-
նում մարդկանց վարակիչ հիվանդությունների
դեմ պայքարելու համար: Արել բուժում ե նաև

բազմաթիվ հիվանդություններ—թոքախար, մի-
քանի կանացի հիվանդությունները: Ներկայումս
չկա յերկիր, վորտեղ արելի բուժում գոյություն
չունենա:

Գյուղում արեն ավելի շատ ե, քան մեծ
քաղաքներում, վորտեղ մեծ տներն ստվեր են
ձկում: Բայց գյուղացիները մեծ մասամբ չեն
կարողանում վնաճատել արել: Կամ հաստ վա-
րաւույրներ են քաշ տալիս և փակում արելի ճա-
ռաղայիթների ճանապարհը, կամ լուսամուտները
լիցնում են ծաղկամաններով, կամ հենց լուսա-
մուտների առաջ ծառեր են տնկում: Գյուղացին
յերեխայի որպացը գրեթե միշտ զնում ե ամե-
նամութ անկյունը:

Այս ճիշտ չե: Յեթև հոգում ես քո և քո ըն-
տանիքի առողջության համար, պետք ե ամեն
կերպ բաց անես արելի ճառաղայիթների ճանա-
պարհը և վոչ թե փակելու:

Նոր անել շինելիս հարկավոր ե հնարավո-
րության սահմաններում շատ արեւադեմ դաւ-
ճել սենյակները:

Գյուղացիները և գեղջկուճիները քիչ են ոգ-
տվում արելի բռնժիշ ուժից նույնիսկ ամռանը,
յերբ արելի տակ են:

Ամռանը պետք ե ինչքան կարելի յե թեթև
հաղնվել, վորպեսպի արելի ճառաղայիթներն ա-
նաղնվել:

վելի մեծ չափով մոտենան մարմնին։ Չպետք է քաշվել և պետք է ինչքան կարելի յե շատ բաց անել թերը, վոտները և վիզը, վորպեսզի արևն այրի։

Շատ տեղ մինչև այսոր ել դատապարտում են մեր յերիտասարդությանը, յերբ նա փորձում ե առանց չափեկի և տրուսիկով ման դալ։ Այն ինչ դա շատ ոգտակար է։

Արևի ճառագայթներն աղատ հովվում են մարմնին, ողի հետ մշտական շվման մեջ մըսներով՝ մեր մաշկն ավելի լավ և աշխատում*), իսկ դա ողուտ ե տալիս ամբողջ մարմնին։

Գյուղական շատ աղջիկներ վախենում են ուեանալուց։ Յերբ արևի տակ են դուրս գալիս, որինակ՝ դաշտային աշխատանքների ժամանակ, նրանք լավ ծածկում են յերեսները, վիզը և նույնիսկ ձեռքերը։ Այդ աղջիկները վեպում են իրենց։ Քաղաքներից ամռանը հատկապես ամառանոցներ են դնում, վորպեսզի ավելի շատ լի-

*) Մեր մաշկի վրա կան բազմաթիվ ծակութիներ, վորոնց միջով դուրս ե դալիս քրտինքը և մուտք ե դործում ողը։ Թարմ ողի հետ ըստվելիս, այս ծակութիներն ալելլի լալ են կարողանում ող անց կացնել և քրտինք ու այլ վնասակար նյութեր դուրս տալ։

նեն արելի տակ և, ընդհակառակը չատ են ու բախանում, յերբ ավելի խիստ են ուեանում։ Այդ ուեանալը, այրոված լինելն առողջության նշան է։ Այդտեղ վոչ մի տղեղ բան չկա։

Սանատորիաներում և կուրորտներում թե հիվանդներին և թե ասողներին արևի վաննա յեն ընդունել տալիս։ Մարդիկ հանվում են և մերկմերկ պառկում գետնի, ճոճաթոռի կամ մահճակալի վրա, ընտրելով այնպիսի տեղ, վորտեղ արևը շատ է, իսկ քամին քիչ։ Միշտամանակ հերթով գետի արդն են չուռ տալիս կուրծքը, մեջքը և կողքերը։ Արևի վաննա ընդունելիս, գլուխը պետք է քիչ ավելի բարձր գերք ունենա, քան մարմինը, և փաթաթված լինի սառը ջրում մզված սպիտակ լաթով։

Այգախսի ողտակար արևի վահնաներ կարելի յե ընդունել նաև գյուղերում, դրա համար ընտրելով հարմար տեղեր—գյուտափին, անտառի բաց տեղերում, մաքուր բակում, կտրանը։

Միայն թե արևի ճառագայթներին պետք է աստիճանաբար վարժվել—առաջին որը վոչ ավելի, քան 5 րոպե, յերկրորդին՝ տասը, յերրորդին՝ 15 և այսպիս ասունակաբար, ամեն անգամ ին 5-ական ըրունուն անդամագույզ։ Սակայն, ընդհանուր առաջի մեկ ժամից ավելի չպետք է սպառկել։ Չպետք և առաջնորդ պատվել խիստ



քրանելու և հոդնելու, ինչպես նաև շատ այրվելու աստիճան, վորպիսին հնարավոր ե շատ յերկար պառկելու դեպքում։ Զպետք ե արեի վանանա ընդունել լողանալուց հետո։ Արեի վանացից հետո յե, վոր պետք ե լողանալ գետում, իսկ յեթե գետ չկա, մարմինը չփել ասուը ջրով։ Դըրանից հետո լավ կլինի առանց հաղնվելու մի կես ժամ պառկել ատվերում, այնպիսի մի աեղ, վորտեղ քամի չկա։ Զպետք ե արեի վանա ընդունել վաչ ուտելուց անմիջապես առաջ, վաչ ել անմիջապես հետո։ Շատ թույլ մարդիկ, ինչպես նաև հիվանդներն առանց բժշկի խորհրդին չպետք ե արեի վանա ընդունեն, վորովհետեւ դրանով նրանք կարող են վնասել իրանց առողջությանը։

«ԿԵՂՏՈՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՃԱՌ Ե ՀԱՐԴԻՍԱՆՈՒՄ
ԲԱՋՄԱԹԻՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ։
ԱՆՀՐԱԺԵՇՏ Ե ՀԱՃԱԽ ԼՈՂԱՆԱԼ, ՓՈԽԵԼ
ՍՊԻՏԱԿԵՂԵՆԸ ՅԵՎ ՍՍՔՐԵԼ ՍՏՏՄՆԵՐԸ։
ՈՒՏԵԼԻՄ ՄԻՇՏ ՊԵՏՔ Ե ՈԳՏՎԵԼ ԱՌԱՆՉԻՆ
ԱՄԱՆԻՑ ՅԵՎ ԼԱՎ ԾԱՄԵԼ»

ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՃԻՇՏ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՆ ԱՌՈՂԶՈՒԹՅՈՒՆԸ

Դեռևս շատ կան այնպիսի գյուղաէիներ, վորոնք կարծում են, վոր հաճախակի լողանալը քնքություն ե։ Իրականության մեջ կետոտ մարդին ե, վոր մեծապես վնասում ե սեփական տոռղությանը։

Զլացված մաշկը հեշտ ե հիվանդան ևմ։ Այդ ե պատճառը, վոր դյուղում շատ են պատահում մաշկի հիվանդություններ—պալարներ, քոս, քորախտ ե այլն։

Այստեղ, վորտեղ կեղտ կա, իտ նաև վարակ։ Իզուր չե, վոր այն յերկրներում, վորսեղ դյուղիներն առելի մաքուր են առըում, քան

մեղ մոտ, գրեթե անծանոթ են այն բազմաթիվ
վարակիչ հիվանդությունները, վորոնցից տա-
ռապում են մեղ մոտ հաղարավոր փոքրաւասակ-
ներ և չափահամներ։ Անծանոթ ե կարմրուկը,
անծանոթ են բծավոր և կրկնվող տիֆը, տրա-
խոման և ուրիշ վարակիչ հիվանդությունները։

Անհրաժեշտ ե սովորություն դարձնել շա-
րաթը կամ գոնե յերկու շաբաթը մեկ անգամ
բաղնիք գնալը և լողանալուց հետո փոխել սպի-
տակեղենը, ինչպես նաև ամեն որ սապոնով լվա-
նալ յերեսները, վիզը, ձեռքբրը, լավ կլինի-
նույնիսկ կուրծքն ու մեջքը՝ մինչև գոտիատեղը։
Նախ քան ուտելը, ամեն անդամ անհրաժեշտ և
սապոնով լվանալ ձեռները։ Կեղտուու ձեռներով
ուտելու դեպքում շատ հեշտ և ուտելվի հետ
վարակն ել փոխադրել բերանը։

Նույնպես շատ լավ ե ամեն առավոտ քնից
վեր կենալուց ահմիջապես հետո սառը ջրով
լվանալ ամրող մարմինը։ Այդպիսին տաք որե-
րում սկսելիս, հնարավոր կլինի սովորություն
դարձնել նաև ամբողջ ձմեռվա համար։ Այդ վոչ
միայն կրաքրի ամբողջ մաշկը, այլև կամրացնի
վող որդանիվը և կնվազեցնի մրսելուց հիվան-
դանալու վտանգը։

Միայն թե մարմինը լվանալուց հետո պետք
է լավ չորացնել, մանավանդ մեջքի ու թեատա-

կերը։ Այլապես՝ կարելի յէ մբսել և հիվան-
դանալ։

Ամռանը, վորտեղ վոր գետ կա, անպայման
ամեն որ պետք ե լողանալ։ Ֆիայն վոչ շատ յեր-
կար, գողալու աստիճան։ Նաև չպետք ե լողա-
նալ ավելի շուտ, քան ուտելուց 2 ժամ հետո։

Պետք ե նաև հետևել արամների մաքրու-
թյանը։ Մեր գյուղերում ատամի խողանակը
հաղվագյուտ բան ե։

Ամեն առավոտ և յերեկո անպայման պետք ե
լվանալ ատամները խողանակով և գեղատնից
գնված ատամի փոշով։ Դրանից թե բերանը
կլինի մաքուք, թե ատամները լավ կմնան և
յերկար կպահպանվեն։

Ֆիղկուլտուրայի ամենալուրջ պահանջներից
մեկն ել լավ կարդ ու կանոնն ե։ Միշտ ել առողջ
և այն մարդու, վոր նույն ժամերին ե պառկում,
նույն ժամերին վեր կենում, նախաճաշում, ճա-
շում և ընթրում։

Կերակուրն ինչքան կարելի յէ սննդարար
պետք ե լինի։ Բայց յերբեք հարկավոր չէ կուշո
ու կուռ, ինչպես ասում են՝ «տրաքելու» աս-
տիճան, ստամոքսում տեղ չլինելու աստիճան
ուտել։ Այդպիսի դեպքում ստամոքսը չի կարո-
ղանա մարսել ամրող կերածը։ Կերածից ոգուտ

չի լինի, իսկ ստամոքսը կիշանա և կսկսի ցաւի ել:

Պետք է աշխատել կերածը շատ լավ ծամել: Լավ ծամված ուտելիքն ավելի մեծ ոգուտ ե տալիս, ավելի յէ շատացնում ուժերը և չի փրչացնում ստամոքսը: Այդ պատճառով ել պետք ե լավ պահել ատամները: Ատամները վոր փշացան, մարդս այլևս չի կարողանում լավ ծամել, փշանում ե նրա ստամոքսը, և ընդունված ունունդն այլևս իր նորատակին չի ծառայում: Մարդն սկսում ե թուլանալ ու նիհարել:

Ամեն մարդ պետք է ուտի առանձին ամանից և առանձին դդալով: Ընդհանուր ամանը վարակը մեկից մյուսին ե փոխանցում: Ընդհանուր ամանի միջոցով են փոխանցվում այնպիսի ծանր հիվանդություններ, ինչպիսին են սիֆիլիսը, թոքախտը և այլն:

Գիշերը, քնելուց անմիջապես առաջ յերբեք չպետք ե ուտել դա վնասակար է:

Առավոտյան աշխատանիքի գնալուց առաջ հարկավոր ե ուտել: Այդ գեղքում ե միայն, վոր աշխատանքն ավելի լույ կզնա և առողջությունը չի փշանա:

«ՎՐԴԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՅԵՎ ՇԿԱԽՈՏԻ ՄԵՋ ԹՈՒՅՆ ԿԱ, ՎԱՐԾ ԹՈՒՆՍՎՈՐՈՒՄ Ե ՄԱՐԴՈՒՆ ՅԵՎ ԹՈՒՆՍՎՈՐՈՒՄ Ե ՆՐԱ ՍԹՐԱՋՈՒԹՅՈՒՆԻՆ: ԿԱՆՈՒԽԻ ՅԵՎ ՎՐԶ-ԶԱՓԱՎՈՐ ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՆՈՒՅՆՊԵՍ ԹՈՒՆՍՎՈՐՈՒՄ Ե ՄԱՐԴՈՒՆ»

ՈՎ ՑԱՆԿԱՆՈՒՄ Ե ԼԻՆԵԼ ԱՌՈՂՇ՝ ՆԱ ԶԻ ԳՈՐԾԱԾՈՒՄ ԻՄԻՉՔՆԵՐ, ԶԻ ԾԽՈՒՄ ՅԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԶԱՓԱՎՈՐ Ե

Ֆիզկուլտուրան կովում և վնասակար սովորույթների գեմ, հատկապես՝ վորելից խմիչք-ներ գործածելու, ծխելու, սեռական կյանքի սանձարձակությունների և սեռական կյանքը շատ կանուխ տարիքում սկսելու դեմ:

Բոլոր վորելից խմիչքները, թե ուժեղները —ողին, կոնյակը, թե թույլերը—գարեջուրը ողին ևն պարունակում, ալյուր: Աեռուլը թունալորում ե թե մեկ անգամից և թե աստիճանաբար: Հաշված ե, վոր 1911 թվին, հենց միայն Պետերբուրգում, իմելուց հանկարծամահ:

Են յեղել 444 հոգի, իսկ ամբողջ Բուսաստանում նախքան պատերազմ՝ աարեկան 5000 հոգի։ 30 տարվա ընթացքում յելրապական բոլոր յերկրներում ալքոհոլից մեռել են յոթ և կես միլիոն հոգի։

Մարդու բոլոր ներքին գործարանները—և՝ սիրտը, և՝ յերիկամունքը, և՝ ներվերը, և՝ ուղեղը—հիվանդանում են և աշխատանքի անընդունակ դառնում։ Շատ հարբեցողներ իրենց կյանքը վերջացնում են գժանոցներում։ Մեզ մոտ ամեն մի 100 խելաղարից 40-ը հարբեցողության հետեանք են։

Յերեմին կան մարդիկ, վոր յերկար տարիներ խմում են և իրենց առողջ են զբում։ Բայց հաստատ կարելի յէ ասել, վոր ալքոհոլի պատճառած վնասը վաղ թէ ուշ յերեան կատ։ Տիֆ, թոքախոտ, խոլերա և ուրիշ հիվանդություններվ հիվանդացողներից խմողների մահացության դեպքերն ավելի շատ են, քան չխմողների։ Այսպես՝ Անգլիայում, 1848 թվի խոլերայի ժամանակ հաշվել են, վոր խոլերայով վարակված 100 հարբեցողներից մեռել են 81 հոգի, իսկ 100 չխմողներից՝ միայն 19 հոգի։

Ալքոհոլը միայն իրենց՝ խմողների առողջության վրա չէ, վոր անդրադառնում է։ Հար-

բեցողների զավակները դրեթե միշտ տառապում են զանազան հիվանդություններով։

Ուղեղը թունավորող ալքոհոլի ազդեցության տակ մարդիկ դադարում են ինքներն իրենց տերը լինել և կարող են թէ իրենց և թէ ուրիշներին ամենածանր վնասներ պատճառել։ Հարցած դրությամբ և՛ սովանություն են գործում, և՛ հրաեւ են աալիս, և՛ աեկական ընտանիքին են կեղեքում, և՛ տնտեսությունն են քայքայում։ Քրեյական հանցագործներից վոչ պակաս, քան մասը հարբեցողներ են։

Մարդու առողջությունը վիչացնելով՝ ալքոհոլը նույնպես խիստ թուլացնում է խմողի աշխատունակությունը, նույնիսկ այն դեպում, յերբ նա քիչ է խմում։

Մեզանում սովորել են մտածել, թէ մի բաժակ ողի վոր դգեցիր՝ աշխատանքը լավ կդնա։ Բանից զուրու և գալիս, վոր այդ յերբեք ել այդպես չէ։

Մի զիտնական այսպիսի մի փորձ արեց։ Նա վերցրեց 40 բանվոր, վորոնք բալորն ել միենույն աշխատանքն ելին կատարում։ Նրանցից 20 հոգու ամեն որ մի փոքր շիշ դինի ելին տալիս, իսկ մնացածներին չելին տալիս։ Առաջին 4 որն այս զինի ստացողներն իրոք վոր կարողանում ելին ավելի շատ աշխատել, քան մնա-

յածները. բայց արդեն հինգերորդ որից նրանք սկսեցին հետզետե ավելի ու ավելի հետ մնալ իրենց ընկերներից :

Ֆիզկուլտուրան պայքար և հանուն բանվորի ու դյուզացու առողջության, ուժի ու ճարպկության, հետեաբար նա կատաղի թշնամի յև վորելից խմբչքներին :

Շատ վատ և անդրադառնում մարդկանց առողջության վրա նաև ծխախոտի մեջ յեղած թույնը, վոր կոչվում է նիկոտին։ Դա շատ առժեղ թույն է։ Նրա մի կաթիլը կարող է մահացու թունավորել շանը։ Այս թույնը մարդու մարմնի մեջ մտնելով աստիճանաբար թունավորում է նրա որդաննեղմը։ Ամենից ավելի տուժում էն թոքերը. թոքախոտը և ուժդին հաղն ավելի հաճախակի յին ծխողների մեջ։ Շատ ծխողներ հաճախ խոռոշում են, կոկորդում ծակոցներ են զգում, զլամապառւյտներ են ունենում։ Նրանք հաճախ կորցնում են ախորդակը և ստամոքսի զանազան հիվանդություններ ստանում։ Ծխողների մոտ հաճախաղեպ են նաև սրտի և ջղերի հիվանդությունները։ Յեղել են կուրանալու գեղքեր, վորոնք առաջացել են ծխախոտի ծխի դրդումից։ Բնդհանրապես չծխողների տեսողությունը միշտ ավելի լավ և լինում, քան թե ծխողների։

Միանդամայն չպետք ե թույլատրել ծխելը ժողովներում և յերեկությունը, վորեղ շատ ժողովուրդ կան, վորոտեղ առանց ծխախոտի ծխի ել ողն այնքան ել մաքուր չե։
Ով ուզում ե առողջ կինել, չպետք ե ծխի, չպետք ե խմի։

Վողելից խմիչքներն ու ծխախոտն առանձնապես վնասակար են յերեխաների և աճող յենական վնասակար դեպքեական համար։ Գյուղական յերիտարիապության համար։ Առաջին յան վնասը, արդությունը պետք է հիշի նաև այն վնասը, վորը պատճառում առողջությանը կանուխ սեղանից կանքը։ Տղամարդկանց համար 20 տառական կյանքը։ Տղամարդկանց համար 18 տարեկանից առաջ, իսկ կանանց համար 16 տարեկանից առաջ սկսվող սեռական կյանքը թուկանից առաջ սուսակությունը, կասեցնում լացնում է նրանց առողջությունը, կասեցնում աճանքը առավել պետք է պահպանի իր ուժերը, վորությունը պետք է պահպանի իր ուժերը, վոր պահպանի ավելի ամբաղինդ լինի, վորպեսզի այդ պետքի ավելի բանական և ոդտակար աշւեժերը գործադրի բանական և ոդտակար աշխատանքի համար։ Առողջությանը վնասում են նաև այն, յերբ հասունացած աղամարդն ու կինը չափախոր չեն իրենց սեռական կյանքում։

Սեռական կյանքի սահմարձակությունը վոչ միայն թույլացնում և մարդուն, այլև վեներա-

կան հիվանդություններով (սիֆիլիս, տրիպո-
սիկ) վարակելու վտանգ և առաջացնում:

Հարբեցողության և ծինելու դեմ պայքարե-
լու հետ միասին Փիզիոլոգուրան պահանջում է
նաև բանական ու չափավոր լինել սեռական
կյանքում:

«ՇԱՐԺԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ԲԱՅ ԱԴՐԻՄ
ԱՄՐԱՅՆՈՒՄ ԵՆ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆՆԵԼ: ՄԻԱՅՆ
ՊԵՏՔ Ե ԽԵՂԱՅԻ ԿԵՐՊՈՎ ԿԱԶՄՈԿԵՐՊԵԼ,
ՎՈՐՊԵՍՉԻ ՆՐԱՆՔ ԶՎՆԱՄԵՆ ԽԱՂԱՅՅՈՂՆԵՐԻ
ԱՌՈՂՋՈՒԹՅՅՈՒՆՆԵԼ»

ՇԱՐԺԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԼԱՎԱ-
ԳՈՒՅՆ ՄԻԶՈՑՆԵՐԻՑ ՄԵԿՆ ԵՆ ԳՅՈՒՂՈՒՄ

Այստեղ ժամանակ, հատկապես տոն որերին
դյուպական յերիտասարդությունը հաճախ զա-
նազան խաղեր ե կաղմակերպում—չուրջպար,
աչքիպատկի, «գարագիլ», գնդախաղ և այլն:
Վերջին տարիներս տեղ-տեղ քաղաքից որինակել
են նաև փուտուր խաղալը: Խաղերը, յեթե ի-

հարկե լավ են կաղմակերպված, կարող են մեծ
ոգում տալ խաղաղողներին: Բայց նրանք կա-
րող են նույնական վնասել: Ել չխոսենք այն մա-
սին, թե ի՞նչպիսի գժբախտություններ են առաջ
գալիս, յերբ գյուղացիները տարվում են այն-
պիսի, խաղերով, ինչպիսին են՝ «ղայթը»
և բռնցքամարտը: Այդտեղ և՛ խեղան-
գամ են դարձնում, և՛ այնքան տալիս իրար,
վոր ծեծվողները հաճախ որերով պառկում են,
և նույնիսկ՝ յերեխն սպանվում:

Առողջ խաղի առաջին պայմանն է խաղը
կաղմակերպել բաց և մաքուր ոդում: Խաղա-
վալը պետք ե ընտրել ճանապարհից հեռու,
այնպիսի տեղ, ուր փոշի չի հասնում: Խոկ յեթե
խաղավայրում փոշի յե լինում, պետք է հաճա-
խակի ջուր չաղ տալ:

Խաղի ժամանակ չպետք ե թնոյլ տալ, վոր
մասնակցողները հոգինեն: Գյուղացիները, նույն-
իսկ գեղջուկ պատանիները չափազանց շատ ուժ
են զործ զնում պետքական աշխատանքի համար
և ավելի շատ չեն կարող վատնել խաղերի վրա:

Ուժի վասնաւմ պահանջող խաղերին չպետք
ե մասնակցեն պատանիները և փոքրերը:

Խաղերում պետք ե, ինչքան կարելի յե, շատ
մարդկարգավել: Բաղմամարդ խաղերին մաս-
նակցողները վարժվում են միասին դործել, նը-

բանց մեջ զարգանում է ընկերականության զգացմունքը, ընկերական վողին:

Խաղը գրավիչ և առողջարար լինելուց բացի՝ ճիշտ կազմակերպման դեպքում կարող է վորոշ գիտելիքներ տալ խաղացողներին: Այլպիսին են, որինակի համար՝ քաղաքական բովանդակություն ունեցող խաղերը: Համենայն դեպք տնքույլատրելի յեն այն խաղերը, վորոնք խաղացողներին վերադարձնում են դեպի հին կենցաղը:

Վորակեազի խաղը խաղացողի առողջությանը ոգտակար լինի և վոչ թե վնասակար, վորակեազի շատ չհաղնեցնի, խաղացողներից ամենից ավելի փորձառուն մնացածներին պետք է ցուցմունքներ տա, թե ի՞նչպես վազել չհոգնելու համար, ի՞նչպես ցատկել իրեն չփնասելու համար և այլն:

Խաղում անպայման պետք է պահպանվեն առողջապահության բոլոր կանոնները: Որինակ՝ աչքակապուկի խաղալիս, ամեն մարդ ինքը պետք է կապի իր աչքերը սեփական մաքուր թաշկինակով, այլապես՝ յեթե խաղացողներից վորեն մեկի աչքերը հիվանդ են, միենույն թաշկինակով բոլորի աչքերը կապելիս, կարելի յե բոլորին ել վարակել:

Խաղը պետք է լինի պարզ, վոչ բարդ, վորակեազի հեշտ լինի այն հասկանալ և վորակեազի բոլոր խաղացողները, յեթե նրանց համար

ավյալ խաղը հոգնեցուցիչ չե, կարողանան մասնակցել:

Սատրանարար, յերբ խաղացողներն արգեն սկսում են վարժվել, կարելի յե ավելի բարդ շարժումներ ել մտցնել, ինչպիսին են, որինակ՝ ցատկելը, նետելը և այլն:

Գեղջուկ յերեխաները և ղատանիները միշտ ել մեծ հաճույքով են խաղում: Բայց հետաքրքիր և ուրախ խաղերին կարելի յե մասնակից զարձնել նաև մեծահասակ դյուղացներին, յեթե նրանք ազատ են: Աւստի բայ ողում լավ կազմակազմակած խաղերը գյուղի մասսայական Փեղկուլտուրայի լավագույն միջոցներից մեկն են հանդիսանում:

Թարմ ողից և շարժումից ամբանում են խաղացողների թոքերն ու սիրառ, թարմանում և արյունը: Կավ խաղերի ժամանակ մասնակցողները թե համելի ժամանաց են ունենում, թե վորոշ զիտելիք են ձեռք բերում, թե ամբանում են և թե ավելացնում են իրենց ուժերն ու ճարպկությունը:

Դրանից բացի, խաղերը, յեթե նրանք շատ մարդ գրավեն, առնվազն դյուղական յերիտասարդ գրավեն, առնվազն գյուղական յերիտասարդությունը, դրանով կկորեն նրանց խմելուց, կոփներ սարքելուց և խուլիդանությունից,

վորպիսիք, դժբախտաբար, հաճախ են պատահաւում գյուղերում:

Ծառ խաղեր կան, վորոնք միանդամայն հարմար են գյուղին, հետաքրքրական են և ողտակար: Այլ ամենն այստեղ նկարագրելը, ի հարկե, հանրապոր չե: Իրեւ որինակ, կարող ենք խոսել նրանցից մի քանիսի մասին:

«Կալես».—Այս խաղին կարող են մասնակցել թե մեծերը և թե փոքրերը: Մասնակցողների թիվը 30-ից պահաս չպետք ելինի: Այս 30 հոգին կանգնում են իրար յետերից՝ ծոծրակ ծոծրակի, մի քանի շարքով, յուրաքանչյուր շարքում հավասար թվով: Շարքերը գասավորվում են անխիլի շառավիղների ձևով, մեկ ծայրից միևնույն կետում միացած: Խաղացողներից մեկը—վարողը—վազում է թերելի հետեւով և խփում շարքերից վորեւ մեկի վերջին մարզուուսին: Հարվածն ստացողը խփում է իր առաջ կանգնածին, դա յել իր առջեկ մարդուն և այսպես հերթով: Յերբ հարված ե ստանում շարքի առջեկ մարդը, խոկոյն բղավում ե—«Ե հե՞յ», և այն ժամանակ ամբողջ թեր, վորտեղ փոխանցված եր հարվածը, գառնում է դեպի ձախ և նրա անդամները, նրանց հետ միասին նաև վարողը, վագ են տալիս ամբողջ շրջանակով, ձախից դեպի աջ, ինչքան կարելի յէ արագ, վորտեսզի կարողանան դարձյալ իրենց թեր տեղը կանգնել: Ով

շուտ հասնի, նա կկանգնի առաջ: Վարողը նույնապես նույն թեսումն է կանգնում, յերբ վոր հասնում է: Այնուհետեւ վարող և դառնում նա, ով ամենից վերջն է հասնում: Խաղը նորից շարունակվում է, այս անդամ ուրիշ թերից:

Լարիբինու. խաղում են պատահները և մեծերը: Խաղը «մուկ ու կատու» հանրածանով խաղի ձևն ունի. միայն թե խաղացողները հայտաբար մասերի յին բաժանվում ե շարք-շարք կանգնում թրաբ ձեռքից բոնած: Հրամանատար ընտրվածի սուլիչի ձայնը լսելուն պես, բոլորը մեկ անդամից գառնում են գեղի մեկ կողմանիցի աջ, յեթե սուլիչը մի անդամ է հնչում, դեպի ձախ՝ յեթի յերկու անդամ: Դասնալուց հետո բոնում են նոր հարեսնների ձեռքը և նոր զդիմաներ են կաղմում: Այս զդիմաների միջի կատուն մուկ է վորուում: Ամեն մի շրջանը կիսունգարի կատվին, վորովհետեւ նա ստիպված կրինի անցկենալ միշտ նոր կազմվող շարքերի միջով: Խակ մկանը բաց են թուղնում թերերը բարձրացնելով:

Վելիկան (ձմեռնային խաղ). խաղացողները յերկու մասի յին բաժանվում: Յուրաքանչյուրն իր համար ձնից վելիկան (հակա) յէ սարքում, սակայն գլուխը, վորը նույնպես ձնից և շինվում, առանձին ե դրվում. շինում են նաև մի քանի պահեստի գլուխներ: Այնուհետեւ համաձայնու-

թյան են դալիս, թէ քանի գլուխ պետք ե վայր
նետել խաղը տանելու համար: Յուրաքանչյուր
մասը թշնամու վելիկանից վորոշ հեռավորության
վրա յե կանդնում և հատուկ դիմ վորոշում, վո-
րից դենը չպետք ե անցնել: Այսուհետեւ սկսում են
ձնագնդով խփել թշնամու վելիկանին գլուխը
վայր զցելու համար: Վայր ընկնող գլխի տեղը
դրվում ե նոր գլուխ: մինչև սարքելը՝ խաղը
դադարեցնում են: Խաղը շահում ե այն մասը,
վոր ավելի չուտ կկարողանա լրացնել վայր նետ-
վելք գլուխների թիվը: Յերբ խաղացողները
սկսում են վարդվել, տարածությունը պետք ե
հետզհետեւ մեծացնել և գլուխների թիվը շատաց-
նել:

Այս և նման խաղեր կարելի յե անցկացնել
գյուղում, աշխատելով ամեն կերպ խաղը լավ
կազմակերպել և նրան մասնակից դարձնել ինչ-
քան կարելի յե շատ մարդ:

«ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ, ԱՐԻՆԱԿ՝
ԹԻԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԶՄՈՒՇԿԸ, ՄԱԳԼՅՈՒՄԸ,

ՎՈՉ ՄԻԱՅՆ ԶԱՐԴԱՅՆՈՒՄ ԵՆ ՈՒԺԻ ՅԵՎ
ԱՄՐԱՅՆՈՒՄ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅԼԵՎ
ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ ԱՅՆՊԻՍԻ ՈԳՏԱԿԱՐ
ԳՈՐԾՈՒՆԵՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ԻՆՉՓԻՍԻՆ
Ե՝ ԽԵՂԴՎՈՂՆԵՐԻՆ ԱԶՈՏԵԼԸ, ՓՈՍ ՈՒ
ԾԱՆՐՈՅՑՆԵՐ ՓՈԽԱԴՐԵԼԸ, ՀՐԴԵՀՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿ ՈԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԵԼ ՅԵՎ ԱՅԼՆ:
ՊԵՏՔ Ե ԱՅՍ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐՈՒՄ
ՆԵՐԳՐԱՎԵԼ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՎՈՂՋ ՀԵՐԻՏԱՍԱՐ-
ԴՈՒԹՅԱՆԸ ՅԵՎ ԻՆՉՔԱՆ ՀՆԱՐԱԿՈՐ Ե՝
ՆԱԵՎ ՄԵԾԵՐԻՆ»:

ՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐՆ ՈԳՈՒՏ ԵՆ ՏԱԼԻՍ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ

Առողջության ամրացման համար մեծ նշա-
նակություն ունեն նաև սպորտային պարապ-
մունքները կամ պարզ առած՝ սպորտը:

Սպորտային պարապմունքները պահելի ունա-
կություն են պահանջում, քան շարժական պարզ
խաղերը: Սպորտային պարապմունքները տար-
բերվում են նաև նրանով, վոր նրանց մեծ մասը

մուշ միայն ուրախ ժամանաց և, այլի ողտակար պետքական գործ :

Թիվավարությունը լավ ժամանց և, իսկ զետերի ամփին զանգակ զցուզերում՝ անհրաժեշտ դրսէ; Կամ դործով տեղ զնալու, կամ ուրիշ տեղերից զանազան բեռներ փոխադրելու համար կարելի յե ողտագործել նախակները: Նավակով են դում նույնակն ձուկ վորաւալու: Խեղդվաղներին փրկելու համար ես յերբեմն նավակ է անհրաժեշտ: Այս բոլորից բացի, թիվավարությունը ողտակար է առողջության համար: Թիվավարությունը կուրծքը լայնացնելու և չնչառությունը լավացնելու լավագույն միջոցն է:

Լոյլ նույնակն զարգացնում է մարդու ուժը, ճարպիկությունը և առողջությունը: Ինչպես թիվավարելիս, այնպես ել լողալիս, մեծ ողնութ տալիս խորը չնչել:

Լողալ կարողանալը հարկ յեղած զեսքում ողտակար և նաև իրեն՝ լողացողի համար թե ինքը չխեղդվելու և թե խեղդվաղին աղատելու տեսակետից: Լոյլ մանկությունից պետք է ուժորի:

Վազգը. վազգի վարժությունները խիստ ողտակար են: Շատ չհոգնելու համար շատ արագ չպետք է վազել: Յեթե վազողը նկատելի չափով կարմրել կամ զժունել և, յեթե նա քրտնլ և, յեթե նրա սիրտը շատ արագ է խփում, յեթե նա

արագ է չնչում, առել ե՝ նա շատ է հոգնել և յեթե շարունակի վազել առանց հանգստահալու՝ վիստակար է: Վազրի ժամանակ խիստ կարևոր է ձիշը չնչառությունը, այսինքն՝ չնչել խորը և համաչափ: Որինակի համար, 6—7 քայլ անեկիս, պետք է մեկ անդամ ող ներչնչել:

Փուտքով. Շատ վազել է հարկավոր ֆուտքով խաղալիս: յերիտասարդությունն այս խաղը շատ է սիրում: Ֆուտքովն սպորտի մյուս ձեերից այն տարբերությունն ունի, որը նա այնպիսի անմիջական ողութ չի տալիս, ինչպես, որինակ՝ թիվավարությունը կամ լողը: Գրա հետ միասին ֆուտքովն ավելի զիմացկությունն է ուժ և պահանջում: Այսպես թե այնպես, ֆուտքովը չպետք է թույլ տալ թույլերին, 17—18 տարեկանից ցած պատահնեմբին և կանանց:

Ցատկել, մազլցել, նետել: շատ ողտակար են այն խողերը, վրանեղ կան ցատկելու, մազլցելու և նետելու մամենաներ: Ցատկելը ուժ և ձարպկություն է տալիս: Դրանից բացի, լավ ցատկելու ունակությունը խիստ ողտակար է չրդեների և բարձր տեղից ընկնելու ժամանակ: Ցատկելիս պետք է վոտքի մասների ծայլերի վրա իջնել, այլ կերպ վնասվել կարելի յե:

Մազլցել, առել ե՝ յելնել վորհե բարձրության վրա, առենք թե ծառի գաղաթը, անցնել

պատերը, պարանով բարձրանալ և այլն: Մա-
զբցելու ամսակությունը ևս շատ ոգտակար է
հրդեհի, հեղեղման և այլ բարձրաթիվ դեպքերում:

Նետեն այն ե, յերբ վորհե բան չըլրում են
դեպի նորատակը, կամ աշխատում են ինչքան կա-
րելի յե հեռու նետել այս կամ այն առարկան, ո-
րինակ՝ պայտ, փայտի կտոր, մուրճ և այլն: Ի
հարկե, պետք է լինել չափապանց գրույչ՝ մարդ-
կանց չխփելու համար: Այս դործողությունը
զարդացնում է ուժը, ճարպկությունը և նշանա-
ռությունը:

Վոտքի սահման (լիքի). Զժեռը սպորտա-
յին լավագույն պարապմունքներից մեկն է հան-
դիսանում վոտքի սահմանով չմշկելը: Այդ գոր-
ծողության ժամանակ վոտքերը, ձեռները և ամ-
բողջ մարմինը ամրանում են, ուժեղանում: Սա-
հելիս չափազանց քրտնում են: Չսառելու համար
չպետք է շատ տաք հազնվել կամ սառնամնիքի
ժամանակ հանվել: Յերբ քամին դեմից ե, չպետք
է շատ արագ դնալ: Վերջացնելուց հետո պետք է
ամրող մարմնի քրտինքը չորացնել: Վոտքի սահ-
մանով դնացողների վոտքի ներբանները հաճախ
ներս են ընկնում: Այս պակասությունը վերացը-
նելու համար պետք է չմշկել, իսկ ամռանը լողալ:

Զմուշկը նույնպես սպորտի ոգտակար ձեռից
մեկն է: Հատկապես մկանները ամրանում են
ֆիգուրաներով չմշկելու ժամանակ:

Չպետք է միայն սպորտի ձեռից մեկն ու
մեկով զբաղվել: Շատ ավելի ոգտակար է, յեթե
մի քանի ձեռը են դործալրվում, թեկուղ յու-
րաքանչյուրից փաքք չափով:

Ամրացնելով մարդու առողջությունը, ավե-
լացնելով նրա ուժն ու ճարպկությունը՝ սպորտը
ողնում է կովելու հիմնդությունների դեմ,
յերկաբացնում է կյանքը և ոժանդակում տնտե-
սությունն ավելի լավ հիմքերի վրա դնելու գոր-
ծին:

Չափահաս գյուղացիներին չարժական խա-
ղերում և սպորտում ներդրավելը դժվար է, մա-
նավանդ առաջին ըրջանում, բայց գյուղական
յերթուասարդությունն ամրողությամբ պետք է
մասնակից դարձնել:

Ուրիշ յերկըներում, վորտեղ գյուղացիու-
թյունն ավելի զարգացած է, քան մեզ մոտ, ըս-
պորտը վաղուց և տարածված և մեծամեծ ո-
գուտներ և տալիս:

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԱՐԶԱՆՔՆԵՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ
ՉԱՐԳԱՑՆՈՒՄ ԵՆ ՄԱՐՄԻՆԸ ՅԵՎ ԱՄՐԱՑՆՈՒՄ
ԴՅՈՒՂԱՑՈՒ ՈՒ ԳԵՂԱԿՈՒՀՈՒ ԱԲՐԱՂՁՈՒ-
ԹՅՈՒՆՆԵԼ: ՄԻԱՅՆ ԹԵ ՀԱՐԿԱՎՈՐ Ե ԼԱՎ-
ԼՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼ ՅԵՎ ՀԱՎ ԵԼ
ԱՆՑԿԱՑՆԵԼ»:

ՇԱՐԱՍԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՅԵՎ ՍՈՈՐՏԻ ՀԵՏ ՄԻԱ-
ՍԻՆ, ՄԵԾ ՈԳՈՒՏ ԵՆ ՏԱԼԻՆ ՆԱՅԵՎ ՖԻԶԻ-
ԿԱԿԱՆ ՄԱՐԶԱՆՔՆԵՐԸ (ՄԱՐՄՆԱՎԱՐՁՈՒ-
ԹՅՈՒՆԸ)

Մարզկային մարմնի բոլոր մասերի հայտ-
առք ամբություն և ուժեղություն, ճիշտ չնշա-
ռություն, արյան կանոնավոր շրջանառություն
և օրակի լավ աշխատանք, — ահա այն ինպիրները,
վոր գեռում և իր առաջ Փիզիկուլտուրան:

Այս խեղիբների իրականացման համար շար-
ժական խաղերից ու սպորտից բացի, մարմնի
մաքությունից, մաքուր ողից ու արեից բացի,
շատ սպատկար են նաև Փիզիկական հասուկ
մարզանքները:

Ֆիզիկական ճիշտ մարդանքների նշանակու-
թյունն այն է, վոր նրանք գլխավորապես հար-
կագում են աշխատել մարմնի այն մասերին և
այն մկաններին, վորոնք սովորական աշխատան-
քի ժամանակ բավականաչափ զբաղված չեն:

Որինակ՝ չափահաս գյուղացիների մեջքը հա-
նախ ծոված և լինում, ծոված են լինում նաև
ծնկները, կրծքի և փորի մկանները թույլ են լի-
նում:

Այդ նրանից և առաջ գալիս, վոր գյուղացին
հաճախ ստիպված և լինում կորացած դիրքով
աշխատել, վորից և թույլանում են մեջքի, կրծքի
և մասսամբ և լ վոսների մկանները:

Շատ գյուղացինե իրենք այդ դպում են և
դրա զեմ միջոցներ վորոնում: Շատ հաճախ
հնձվոր տղամարդիկ և կանայք նախքան հնձելը
և հնձելուց հետո մարմինները ձիգ են առաջ
դեպի հետ, վոր «մեջքը չցավիք»:

Հատ գյուղացիներ կործում են, թե կորա-
ցած ծնկները և մեջքը վնասակար չեն: Իրակա-
նության մեջ այդ այլողես չե:

Կրծքի և մեջքի թույլ մկանները խանգարում
են խորը չնչելը, բավականաչափ մաքուր ող ներ-
մնչելը և անմաքուր ողը ամբողջությամբ արատ-
չնչելը: Իսկ այդ վնասակար ե: Դրանից մարդիկ
ժիվանդանում են և հաճախ կրծքի հիվանդու-

թյուններ ստանում, ինչպես, որինակ՝ հազ, խոպոտություն, կրծքի ցավեր և այլն:

Ֆիզիկական մարդանքները կամ բացնեն գյուղացիների և առաջին հերթին գյուղական յերեսասարդության մեջքի և վոտքի մկանները: Դըրան շատ են նպաստում նաև շարժական և սոլորտային խաղերն ու պարագմունքները: Բայց հաճախ ֆիզիկական մարդանքները շատ ավելի մեծարդյունքներ են տալիս:

Վարտեղ վոր գյուղական յերիտասարդությունը հնարավորություն ունի շարժական մի յերկու անգամ ազատ ժամանակները Փիզիկական մարդանքներով դրազվել, անողայման պետք ե զբազվի:

Այստեղ մենք չենք կարող մանրամասն ցուցմունքներ տալ թէ ո՞վ ինչպիսի մարդանքներ պետի կատարի և ի՞նչպիս կատարի: Մենք կարող ենք բերել միայն մի քանի որինակներ, վորոնք հարմար են գյուղական յերիտասարդությանը:

Մարդանքն սկսելիս, պետք է մարմնին ճիշտ ձեւ տալ, այսինքն՝ մարմինն ուղիղ պահել, ծընոտը փոքր ինչ իշեցնել, թեևը ցած թողնել, ձեռները ձգել և կպցնել կողքերին, կրունկները միացնել, իսկ վոտքի ծայրերը հեռու պահել: Մարդանքը կատարելիս, ամենից առաջ-

դրամիցուն պետք և դարձնել չնչառությունը դարդացնող ձեւերի վրա:

Վարժություն № 1 — Մարդկաղները բարձրանում են վոտքի ծայրերի վրա և միաժամանակ քթով խորը ներշնչում: Այդ ժամանակ ձեռքերը պետք և պարզել գեպի աջ և ձախ, ափերը՝ վերև: Այսուհետեւ ինչում են ամերող ներրանի վրա՝ գանդաղ իջեցնելով ձեռները և արտաշնչելով: Վարժությունը կատարվում է 3—4 անգամ:

Վարժություն № 2 — Մարդկաղները գլուխը գանդաղ չուռ են տալիս գեպի աջ և խորը ներշնչում: Այսուհետեւ ելի գանդաղությամբ գլխին նախկին ձեռն են տալիս և արտաշնչում: Այսպես կրկնում են մի քանի անգամ: Մըանից հետո մի քանի անգամ ել անում են նույն վարժությունը՝ այս անգամ գլուխը գեպի ձախ չուռ տալով:

Վարժություն № 3 — Վատները միմյանցից բաժանելով և մեջքն ուղղելով խորը ներշնչում են: Այսուհետեւ զանդաղ կուանում են գեպի ցած, առանց վոտները կորացնելու, աշխատելով ըսոնել վոտքի մատները և միաժամանակ արտաշնչում: Հետո ել զանդաղ ուղղվում են, ներշնչելով և ձեռներն ինչքան կարելի յե գեպի հետ պարզելով: Վարժությունը կրկնվում է յերեք անգամ: Եախաղես այս վարժությունը բավականագույքը է, բայց հետո հետությամբ են սովորում:

Վարժությունի № 4.— Աւզիկ գիրք ստանալով՝ ձեռները կողցնում են աղքարերին և վոտքի ծայրերի վրա բարձրանում ու ներշնչում։ Այնուհետև շատ գանդաղ պազում են՝ կորացնելով ծնկները և առանց հեռացնելու թաթերը։ Այդ շարժման ընթացքում արտաշնչում են։ Ապա գանդաղ բարձրանում են և ներշնչում։ Վարժությունը կրկնվում է 3—4 անգամ։

Վարժությունի № 5.— Պատից կես քայլ հեռավորության վրա կանգնում են՝ քամտկը գարձւած գեղի պատը։ Փորը ներս քաշելով և ձեռները վեր պարզելով կուանում են գեղի հետ, վարդեսդի ձեռներով պատը լունեն։ Կուացնում են մարմնի վերեի մասը միայն։ Վուաները և փորը անշարժ են մնում։ Յեթե դա առաջին անգամից դժվար է, կարելի յե վոչ թե կես քայլ հեռավորության վրա փորձել, այլ ավելի վորք հեռավորության վրա։ Այս վարժությունից հետո պետք է մի քանի անգամ խորը ներշնչել և արտաշնչել։

Վարժությունի № 6.— Պառկում են քամտկի վրա, ձեռները պահում են ծոծրակին։ Դանդաղ շարձրացնում են իրանը և ներշնչում, ապա նախեկին դիրքին ընդունում և արտաշնչում։ Վարժություն ժամանակ պետք է աշխատել վուաները շբարձրացնել, թեև դա առաջին անգամից միշտ հնարավոր չե։

Ֆիզիկական վարժությունները կարելի յե անել միայն մաքուր ողում, ամուսնը դաշտում կամ այլում, միայն այնպիսի տեղ, վագանեղ վուշի չկա, իսկ ձմռանը լավ ողափոխված և ողանցքը բաց արած սենյակում։ Տղամարդիկ այս վարժություններն անելին միայն մի արուսիկ պետք ե հաղնեն, իսկ կանաչք՝ արուսիկ և մայկա։

Ֆիզիկական վարժություններով զբաղվելու չամար յերիտասարգությունը պետք է հավաքվի շաբաթական 2-3 անգամ, միասին պարապելու։

Յերբ հնարավոր չի լինում լավ ու վարձված զեկավար ձարել, պետք է ձեռք բերել այնպիսի դրվեր, վորոնց մէջ մահրամասն նկարագրված են ֆիզիկական զանազան վարժությունները և վորոնցով դեմք տառչին ժամանակների համար հնարավոր կլինի ճիշտ տանել պարապմունքները։

Վարժություններն ողուտ կտան միայն այն ժամանակ, յերբ նրանք ճիշտ կտարվեն։

«ԳՅՈՒՂԱՅԻ ԱՂՋԿԱՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅՅՈՒՄ
ՆԵՐԳՐԱՎԿԵԼ ՔԻՉ ԱՎԵԼԻ ԴԺՎԱՐ Ե, ԳԱՆ
ՊԱՏԱՆԻՆԵՐԻՆ: ԲԱՅՅՅ ՆԵՐԳՐԱՎԿԵԼՆ ԱՆՀՐԱ-
ԺԵԾԵՑ Ե: ԱՌԱՆՑ ԴՐԱՆ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԶԻ
ԿԱՐՈՂԱՆԱՌ ՀԱՄԵԼ ԳՅՈՒՂԱՅԻ ՈՒԹՅԱՆՆ
ԱԲՈՂՋԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿԻՆ»:

ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՖԻԶԿՈՒԼՏՈՒ-
ՐԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽՆԴԻՐ-
ՆԵՐԻՑ ՄԵԿՆ Ե

Կինն ել հավասար չափով պետք ե մտածի իր
առողջության մասին, ինչպես տղամարդը: Կինն
զգալի չափով ավելի թույլ ե, քան տղամարդը:
Նա շատ ուժ ե սպառում հղիության, ծննդի և
յերեխայի մնուցման վրա: Նա շատ ել աշխատում
ե, մեծ մասամբ ծնունդից հետո, մի քանի որ
հանգստանալու հնարավորություն չի ունենում:
Ֆեկ դա շատ ե վնասում նրա առողջությանը:
Ծննդյան ժամանակ նա զուրկ ե բժշկի կամ ման-
կաբարձուհու աջակցությունից, վոր նույնպես
շատ ե վնասում նրան: Այս բոլորից ստացվում ե

այն, վոր ՅՅ տարեկան հասակում կինը կորցնում
է իր առողջությունն ու յերիտասարդությունը և
պառակի կերպարանք ե ստանում:

Սեփական առողջության մասին մտածելը
հսկայական ոգուտ ե գեղջկուհու համար:

Դյուզի աղջիկները շատ հաճախ ավելի քիչ
հնարավորություն ունեն մաքուր ողից ու արե-
վից ոգավելու և գետում լողանալու, քան տղա-
մարդը: Տնային աշխատանքը խլում ե նրանց ամ-
բողջ որը: Դրանից ե, վոր նրանք թուլանում են,
արյան պակասություն և զանազան ջղային հի-
վանդություններ ստանում:

Բայց միայն իրեն ու իր տնտեսությունը չե,
վոր վնասում ե գեղջկուհու թույլ առողջությու-
նը: Միայն առողջ մայրենն են, վոր առողջ զա-
վակներ են ծնում: Դրա համար ել առողջ մայրե-
ը հատկապես դնահատելի յեն:

Գեղջկուհին ուշիուշով պաեք ե հետեւի իր
մարմնի մաքրությանը: Կանանց կեղտոտությու-
նը հատկապես մեծ վնաս ե պատճառում:

Գեղջկուհին բավականաչափ պետք ե լինի
բաց ողում, արեկ տակ, բավականաչափ չար-
ժում պետք ե ունենա:

Խոսելով գեղջկուհու Փիզկուլտուրայի մասին՝
չի կարելի մատնանշել, վոր ծննդի ժամա-
նակ բժշկական լավ ոգնություն պետք ե ցույց
տալ ծննդկան գեղջկուհիներին: Առանց դրան-

անկարելի յէ լուրջ կերպով ժամանել գեղջկուհու առողջության մասին :

Ներկայումս առանձնապես զժվար և գեղջկուհի աղջիկներին սպորտի և ֆիզիկական վարժությունների մեջ ներդրավելը : Ծերտունիները հեշտությամբ չեն վարժվում զրան և հաճախ խանդարում են : Ինքը գեղջկուհին ել սովորաբար խկույն չի ըմբանում Փիզիկուլտուրայի ամբողջ շպատը և չի հետաքրքրվում նրանով : Այդ և պատճառը, վոր ամենուրեք զյուզական Փիզիկուլտիմբակներում կանանց թիվը փոքր է : Այդ հատկապես աչքի յէ զարկում աղջային հանրապետություններում, վորակը կանայք գեռիս լիովին չեն ազատապրված :

Գյուղերում հատկապես չեն սիրում կին-Փիզիկուլտուրների հագուստները, բաց թիվերով ու վորաներով : Բայց զե մի ժամանակ ամբողջ աշխարհի մահմեղականներն ամենամեծ ամոթն ելին համարում կանանց յերեսները բաց պահելը, իսկ այսոր արդեն չաղքան գնալով վերանում և հետեւարար՝ ժամանակի ընթացքում մեր զյուզացին ել կվարժվի կին-Փիզիկուլտուրների մերկ սրունքներին և վոչ մի վատ բան չի տեսնի այսեղ :

Գեղջկուհիներին Փիզիկուլտուրայի մեջ ներդրամվելը կարեոր և նաև մի ուրիշ տեսակետից :

Տան կարգ ու կանոնը հաճախ մեծ մասամբ տան որիուհուց և կախված : Ցեղե Փիզիկուլտուրան սովորեցնի գեղջկուհուն մաքուր ողի, արեի ու մաքության նշանակությունը, դա կանգրապանում ամբողջ ընտանիքի վրա :

Ի հարկե, Փիզիկուլտուրայով պարապելիս, կինը պետք է հիշի, վոր նաև վորոշ չափով ավելի թույլ և քան աղամարդուք, վոր նրա մարմինը վորոշ չափով այլ կազմություն ունի, հետեւարար՝ նու չողեաք և հավասարապես մասնակցի բոլոր տպորապեն խաղերին և Փիզիկական վարժություններին :

Կանայք առանց իրենց առաջությունը վնասություն կարող են անել միայն այն վարժությունները, վորոնք չառ մեծ ուժ չեն պահանջում, վորոնք չառ չեն հոգնեցնում փորի մկանները : Կինը չպետք է նույնական չառ մեծ ցատկություն կատարի :

Այդ զգուշության անհրաժեշտությունը պետք է գիտակցեն նաև աղամարդիկ : Այնինչ, հաճախ նրանց իրենց ծաղբանքներով հարկադրում են, վոր աղջիկներն ել ունենան այն հաջողությունները Փիզիկուլտուրայի մեջ, ինչ աղամարդիկ : Իսկ դա վնասակար հետեւանքներ կարող և ունենալ :

Ա. Ի կենքն առում եր, վոր խորհրդակին

Փիդկուլառուբայի դլխավոր խնդիրներից մեկն և
հանդիսանում բանվորուհիների և ղեղջկուհիների
ներդրագումը։ Այդ լավ պետք է հիշեն Փիդկուլ-
առուրնիկները գյուղում։

Իլլիչի այս պատգամը կկատարի միմիայն
այն Փիդկուլախմբակը, վոր կկարողանա, բավա-
ր քանակությամբ կին և աղջիկ ներդրացի իր
շարքերը։

«ՖԻԶԿՈՒԼՏԻՑԻՄԲԱԿԸ ԿԱԶՄՎՈՒՄ և ՖԻԶԿՈՒԼ-
ՏՈՒՐՍՅՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՊԱՐԱՊԱՂՆԵՐԻՑ»։

ԽՄԲԱԿԻ ԽԵԴԻՔՆԵՐՆ ԵՆ—ՂԵԿԱՎԱՐԵԼ-
ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐԱՊԱՀՆՔՆԵՐԸ, ՖԻԶԿՈՒԼ-
ՏՈՒՐՍՅՈՎ ԸՆԴԳՐԿԵԼ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ
ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔ ԾՂՎԱԼԵԼ,
ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԳՅՈՒՂԻ ՍԱՆԻՑԱԲԱԿԱՆ
ԱՇԳՐԱԳԻՑՈՒԹՅՈՒՆՆԵԼ»։

ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐՆ
ԱՄԲՈՂՋ ԳՅՈՒՂԻ ԱՌՈՂՉԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ-
ՆԵՐՆ ԵՆ

Այն յերիտասարդությունը, վոր կանոնավոր
կերպով Փիդկուլառուբայով կարարապի, պետք և

միանա և Փիդկուլախմբակ կազմի։ Ի հարկե,
առաջին ժամանակները շատերը չեն, վոր խմբա-
կի անդամ կդառնան։ Զափահաս գյուղացիներն
առաջին որերը դա մի տեսակ չարաձիություն
կհամարելին։ Բայց յեթե ստեղծվի մի փոքր կո-
րիզ, վոր գործով կարողանա ցույց տալ, թե
Փիդկուլառուրան ոգում և տալիս, ամբացնում և
յերիտասարդության առողջությունը, զբաղեցնում
և նրան, կտրում շվայտությունից ու խույիգանու-
թյունից, այն ժամանակ վերաբերմունքը կփոխ-
վի։ Գյուղացիության լավ վերաբերմունքը ձեռք
բերելու համար, — իսկ այդ անպայման պետք և
ձեռք բերել, — շատ կարենոր և, վոր դյուզը ովյալ
խմբակից վորեւ ոգտակար բան տեսնի։

Շատ լավ կլինի, յեթե խմբակն իր անդամ-
ներից կամավոր հրդեհաշեների խումբ կազմա-
կերպի ովյալ գյուղում կամ հարեան դյուղերում
հրդեհ պատահած ժամանակ ոզնության հասնելու
համար։

Ֆիդկուլառուրնիկները կազմակերպված ձեկով
պետք և հանդիս զան բոլոր այն աղետների ժո-
ժանակ, վորաեղ նրանց ձեռք բերած հարպկու-
թյունը և կոլեկտիվ կերպով աշխատելու ովյու-
րությունը կարող են ոգտակար լինել։

Կարելի յե նույնպես տեղ-տեղ կազմակերպել
փոստի և թերթերի վորխագրության գործը՝ դրան

աբգմագրելով, նայած տարիվա յեղանակին, նա-
վակներ, վատքի սահնակներ, հեծանիվներ և այլն:

Նոր անդամներ ներգրավելիս, խմբակն իւստրկե, առաջին հերթին ուշադրություն պիտի դարձնի յերկու սեռի՝ պատասնիների և յերիտասարդների վրա:

Ներդրվել ԳՅՈՒՂԻ ՎՈՂՋ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒ-
ԹՑԱՆՔ—ԱՀԱ ԽՄԲԱԿԻ ԽԵԴԻԲԸ

Խմբակի կազմակերպման նախաձեռնությունն
ու դեկավարությունը մեծ մասամբ իրենց վրա
յեն վերցնում կոմյերիտականները: Գյուղական
կոմյերիտականները լավ պետք ե հիշեն կուսակ-
ցության վորոշումները Փիզկուլառուրայի ասպա-
րեզում կոմյերիտմիության կատարելիք աշխա-
տանքի մասին:

Ֆիզկուլտուրան պյուղում տարածելու գոր-
ծում խոշոր դեր կարող են կատարել զորացրված
և արձակուրդավոր կարմիր բանակայինները,
վորոնք լավ դաստիարակություն են ստանում
կարմիր բանակում ծառայելիս: Խմբակը սերտ
կերպով պետք ե կապված լինի տերիտորիալ
դրամաների և նախազիննակոչային պատրաստու-
թյամբ զբաղվող կազմակերպությունների հետ:
Նախազիննակոչինները պարտապիր կերպով Փիզ-
կուլտուրայով են զբաղվում, հետևաբար՝ նրանց
հետ կապ պահպանելն, անհրաժեշտ:

Հեռու չպետ և մնան նաև բժիշկը, ուսուցիչը.

և խրճիթվարը: Հաճախ խրճիթ-ընթերցարանն
այն վայրն է, վորոնեղ հավաքվում և պարապում
և Փիզկուլտումբակը Յերեմյան ել հարկավոր և լի-
նում այլ նպատակների համար ողբազործել
գովոցը և դյուցիսուրդի չենքը:

Այսպես թե այնպիս, պետք ե հիշել, վոր
ձմեռը Փիզկուլտումբակի պարապմունքներին
հատկացվելիք չենքը պետք ե լինի բավականա-
չափ ընդարձակ, լուսավոր ու մաքուր (իսկ ամա-
ռըն այդ պարապմունքները տեղի յեն սանհենում
բացովյա):

Ֆիզկուլտումբակը և նրա դեկավարները պետք
ե գիտակցեն, վոր Փիզկուլտուրան միմիայն վար-
ժություն ու սպորտ չի: Խմբակի բոլորանդամ-
ներն իրենց պարապմունքներին զուգընթաց պետք
ե պահանջեն առողջապահական այն կանոնը,
վորոնց մասին մենք համառոտակի պատմեցինք
այս գրքույկում:

Ֆիզկուլտուրնիկները հմտությամբ պայքա-
րելով իրենց ընտանեկան կենցաղի առողջացման,
մաքուր ողի ու բնակարանի համար, կովելով
հարեցողության և սենյակներում ծիսելու գեմ,
զրանով ոժանդակած կլինին նաև վողջ ընտանիքի
առողջացման գործին: Իսկ իրենց լավ որինակով
նրանք առիթ կհանդիսանան, վոր ուրիշ ընտանիք-
ներ ել հետեւն նրանց որինակին:

ԹՇե իրենց անդամներին և թՇե՛ բոլոր դյուցա-

ցիներին հասկանալի դարձնելու համար առողջապահության և Փիզկուլտուրայի հարցերը, խըմբակն այդ թեմայի շուրջ պետք ե դնել բժշկի զեկուցումները, իսկ յեթե բժիշկ չկա, ողտագործի Փելքերին և ուսուցչին, յեթե միայն նրանք բավականաչափ հմուտ են այս հարցերում:

Գյուղական Փիզկուլտուրակը գյուղական կենցաղի առողջացման և գյուղացիների առողջապահական անգրագիտության դեմ պայքարելու կենտրոնն և հանգիսանում:

Սնհարամեշտ ե, վոր Խմբակի ղեկավարները բավականաչափ ուշագրություն դարձնեն խմբակի արական և իդական մասերի փոխհարաբերության վրա: Ն. Ա. Սեմաշկոն իր հոդվածներից մեկում գրում ե— «Ֆիզիքական մարզական ժամանակները լավագույն միջոցն են սեռականվաղարթնացման դեմ և լավագույն կարգավորիչը սեռական կյանքի համար: Բժիշկները սպորտ ու Փիզիքական մարզանք են հանձնարարում բոլոր նրանց, ովքեր սեռական կյանքում աննորմալ են, սկսած ոնանիզմից մինչև անբարոյական կյանքը: Յեվ դա (Փիզկուլտուրան) այդ բոլոր հիվանդությունները բուժելու լավագույն ու ամենահաստատուն միջոցն ե»:

Ֆիզկուլտուրայի այդ նշանակությունը պահպանելն առանձնապես կարեր է: Այնպես պետք ե դնել աշխատանքը, վոր հենց առաջին իսկ որերից խմբակում զուտ ընկերական հարաբերու-

թյուններ սահմանվեն աղջիկների և տղաների միջև: Ինչպես այս կանոնները չպահպանողների, այնպես և Փիզկուլտուրայի հիմնական պահանջներին չենթարկվողների— որինակ՝ հարբեցողների, ժողովներում ծխողների— նկատմամբ պետք է ծեռք առնել մինչև իսկ խմբակից վտարելու առարկանը:

Ֆիզկուլտուրակի պարագմունքներն ողտակար են այն ժամանակ միայն, յերբ նրանք ճիշտ ու հմտությամբ են տարվում: Յեթե, որինակի համար, ուժից վեր վաժբություններ արվեն, կամ չափագույն շատ, ծայր տափական հողներու չափ պարագն այս կամ այն վարժությամբ, ապա դա ոգուածի փոխարեն վնասել կարող է միայն:

Խմբակի պարագմունքներն ամռանը կեսորին չպետք է լինեն, վորովհետեւ շատ չող է լինում: Ամառային հրապարակը և ձմեռային չենքը լիակատար մաքրություն և կարգ ու կանոն պետք է ունենան:

Վարժությունների և խաղերի ընտրություն պիետք ե կատարել, հաշվի առնելով մասնակցողների առողջության չափը: Դր ահամար իմաստ կարեոր և բժշկի հետ կապվել: Լավ կլինի, յեթե բժշկը քննության յենթարկի խմբակի բոլոր անդամներին և ջոկի թույլերին մասնանշի, թե նըրանց համար վոր խաղերն ու վարժություններն են լինուակար:

Յեթե խմբակը ղեկավար չունի, լավ կլինի

ջոկել մի բանիմաց ու կորովի տղա և նրան ու-
լարկել հարևան քաղաքը պատրաստվելու։ Թե-
րեռ չեֆրնկերություններն ել կարողանան ոգնու-
թյան դալ։

Համենայն գեսու, թե՛ խմբակի դեկավարը և
թե՛ անդամները Փիդկուլտուրային դրականու-
թյուն պետք է կարգան, գոնե զրգերով կարողա-
նան վերահասու յինել Փիդկուլտուրայի կարեսը
Հորցերին։ Խմբակը պետք է հետեւ նաև, վոր
խրճիթ-ընթերցարանը սերել տա Փիդկուլտուրա-
յին վարժությունների մանրամասն նկարագրու-
թյունը բովանդակող վորոշ քանակությամբ զվա-
կանություն։

Յերբ նմբակի անդամներն զգալի հաջողու-
թյուններ կունենան սպորտի այս կամ այն տե-
սակի մեջ, այն ժամանակ խմբակը կարող է խա-
ղեր կազմակերպել և մրցության հրավիրել հա-
րեան գյուղերի կամ քաղաքի Փիդկուլտիվբակ-
ներին։

Այս տիպի համգիտումները չափաղանց չառ
եւ շահագրգում ու զրավում խմբակի անդամ-
ներին։ Բայց այսպիսի մրցությունները չպետք է
հոմախակի զարձնել։ Բանվորական և գյուղու-
ցիսկան Փիդկուլտիմբակներ նպատակն արի չ
ի մրտկներին, հապթելու համար չամանցներ
ունենալու չի պահանջական Փիդկուլտիմբակի
նպատակն իր անդամների վահանակությունը կեն-
ցաղն առողջացնելն է։

ՀՀ Ազգային գրադարան



NL0263997

2456

TOU

፩፭፬፯ ፲፰ ፲፻፭.